

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձն Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Արմավիրի մարզի հարգարժան բնակիչներ,
Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Պատմություն է դառնում դժվարություններն ու փորձությունները հաջողությամբ և միասնական ջանքերով հաղթահարած, ինչու չէ նաև նորանոր ձեռքբերումներ գրանցած մի տարեթիվ, որը մեզ դարձրեց առավել համախմբված համընդհանուր նպատակների շուրջ և սրտացավ միմյանց հանդեպ:

Այնուամենայնիվ, մենք թևակոխում ենք նոր տարի, և իմ ցանկությունն է, որ 2015 թվականը լինի խաղաղ արարման և նպատակների իրագործման տարի՝ մեզ ուղղորդելով առաջընթացի ճանապարհով:

Միանգամայն ակնհայտ է, որ մարզային իշխանությանը վերջին տարիներին հաջողվել է մեղմել բնակչության բնականոն կենսագործունեությանը խոչընդոտող երևույթները և բարելավել ընդհանուր կենսամակարդակը: Սակայն մենք երբեք չենք սահմանափակվել մեր ձեռքբերումներով և ձգտել ենք ավելի ին՝ իրագործելու համակողմանի զարգացած մարզային տնտեսության մեր տեսլականը:

Ինչ խոսք, անելիքներ դեռ կան, պարզապես պետք է հասցնել և արժանապատվորեն կյանքի կոչել դրանք: Իսկ մեր դեպքում կարող եմ վստահորեն ասել, որ կա ամենակարևորը՝ աշխատելու, արարելու ձգտումը, մարզում կյանքն ավելի լավը դարձնելու, համայնքների սոցիալ-կենցաղային պայմանները փոխելու և մարդկանց համար առավել արժանապատիվ կենսակերպ ապահովելու վճռականությունը:

Համոզված եմ, որ մեր երագած իրականությունը մենք կկերտենք պետության և նրա մասնիկը հանդիսացող մարզային իշխանության ու հասարակության ամենատարբեր կառույցների, ինչպես նաև առանձին անհատների միջև փոխվստահության ամրապնդման, կառուցողական ուժերի մեկտեղման արդյունքում միայն:

Ուստի եկեք հավատանք ու սիրենք, ներենք ու ընդառաջենք, վստահենք ու աջակցենք մեկմեկու: Այս դեպքում հաջողությունն իսկապես անխուսափելի կլինի:

Հարգարելիներս,

Մենք նոր տարի ենք մտնում նոր հույսերով և զարգացման մեծ ակնկալիքներով: Թող 2015 թվականն արդարացի բոլոր հույսերն ու սպասումները: Խաղաղության, նվաճումների ու նպատակների իրականացման տարի եմ մաղթում բոլորիս:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյան